ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ
ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

24 հուլիսի 2017 թ. № 146 - Ա/1

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԱՁԵՎԵՐԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՆԵՐԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՉԱՓԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ, ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՀԱՇՎԱՐԿՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» № 1060-Ա որոշման հավելվածի 1.1.4. բաժնի «Սպորտ և երիտասարդություն» գլխի 4-րդ ենթակետի «ա» պարբերության՝ *հրամայում եմ՝*

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից Հայաստանի Հանրապետության մարզաձևերի ֆեդերացիաներին ֆինանսական աջակցության չափի հաշվարկման կարգը՝ համաձայն № 1 հավելվածի.

2) ֆինանսական աջակցության չափը հաշվարկող հանձնաժողովի կազմը և գործունեության կարգը՝ համաձայն № 2 հավելվածի:

2. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում 2017 թվականի օգոստոսի 1-ից:

Հ. ՌՈՍՏՈՄՅԱՆ

Հավելված № 1
Հայաստանի Հանրապետության սպորտի և
երիտասարդության հարցերի նախարարի
2017 թվականի հունիսի 24-ի
№ 146-Ա/1 հրամանի

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԱԾԵՎԵՐԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՆԵՐԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՉԱՓԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից Հայաստանի Հանրապետության մարզածևերի ֆեդերացիաներին (այսուհետ՝ ֆեդերացիա) ֆինանսական աջակցության հատկացման պայմանները, չափը, հաշվարկման պայմանական խմբերը և գործակիցները:

II. Նպատակը

2. Հայաստանի Հանրապետությունում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման նպատակով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցները հատկացվում են այն ֆեդերացիային, որի գործունեությունն ուղղված է Հայաստանի Հանրապետությունում տվյալ մարզածևի զարգացմանը, բարձր արդյունքների նվաճմանը, Հայաստանի Հանրապետության միջազգային ճանաչմանը, միջազգային մարզական կառույցներին ինտեգրմանը, Հայաստանի Հանրապետությունում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասսայականացմանը, ֆիզիկապես ուժեղ պատանիների ու երիտասարդների դաստիարակմանը և կայացմանը:

III. Ֆինանսական աջակցություն ստանալու համար պահանջվող փաստաթղթերի ցանկը

3. Ֆինանսական աջակցություն ստանալու համար ֆեդերացիան ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում պետական կառավարման լիազոր մարմին՝ Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն (այսուհետ՝ Նախարարություն) է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը (այսուհետ՝ հայտ)՝

1) դիմում,

2) ֆեդերացիայի պետական գրանցման վկայականը, կանոնադրությունը և դրանց պատճենները,

3) ֆեդերացիայի ղեկավար մարմնի նիստի արձանագրությունը և գալիք տարվա մարզական միջոցառումների օրացուցային պլանը,

4) համապատասխան մարզաձևի միջազգային ֆեդերացիային անդամակցելու վերաբերյալ հիմնավորող փաստաթուղթը և դրա պատճենը,

5) «Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտե» իրավաբանական անձանց միության անդամ լինելու մասին տեղեկանքը,

6) մարզաձևի զարգացման ծրագիրը՝ ներառելով ակնկալվող արդյունքները, մարզական միջոցառումների օրացուցային պլանը, միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և (կամ) միջոցառման կազմակերպման և անցկացման կանոնակարգով նախատեսված չափորոշիչների սահմաններում կազմված ֆինանսական միջոցների ծախսերի նախահաշիվները և նախորդ տարվա մարզական արդյունքների վերաբերյալ տեղեկանքը,

7) Հայաստանի Հանրապետության առաջնությունների անցկացման կանոնադրությունը՝ հաստատված ֆեդերացիայի նախագահի կողմից,

8) ֆեդերացիայի նախագահի կողմից հաստատված հավաքական թիմերի (այդ թվում՝ երիտասարդների և պատանիների, եթե այդպիսիք կան) կազմերը,

9) հաշվետու տարում ֆեդերացիայի և Նախարարության միջև կնքված պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման մասին հաշվետվությունը,

10) նախորդ երեք տարիների ընթացքում Հայաստանի Հանրապետության առաջնությունների անցկացման արձանագրությունների քաղվածքը:

4. Սույն կարգի 3-րդ կետի 2-րդ, 5-րդ և 10-րդ ենթակետերի պահանջը գործում է, եթե ֆեդերացիան առաջին անգամ է ներկայացնում հայտ, և 9-րդ ենթակետի պահանջը չի գործում, եթե ֆեդերացիան առաջին անգամ է ներկայացնում հայտ:

IV. Պետական ֆինանսական աջակցության գումարները ծախսելու նկատմամբ ներկայացվող պահանջները և հայտի մերժման հիմքերը

5. Ֆինանսական աջակցություն հատկացվում է այն ֆեդերացիային, որը միջազգային պաշտոնական միջոցառումներում (օլիմպիական խաղեր, աշխարհի և Եվրոպայի առաջնություններ, շախմատային համաշխարհային օլիմպիադա, համաշխարհային ուսանողական խաղեր, պատանեկան օլիմպիական խաղեր և այլն) նվաճել է բարձր արդյունքներ, ապահովված է բարձր որակավորում ունեցող մարզիչներով, ունի մարզաձևի զարգացման համար համապատասխան նյութական բազա և մարզական ավանդույթներ:

6. Ֆինանսական աջակցության միջոցներից չի թույլատրվում կատարել ֆեդերացիայի ղեկավար կազմի և աշխատակիցների աշխատավարձերի, տնտեսական, կոմունալ, կենցաղային ծառայությունների հետ կապված ծախսեր:

7. Ընթացիկ տարվան հաջորդող տարում ֆինանսական աջակցություն ստանալու համար ֆեդերացիան հայտը Նախարարություն է ներկայացնում մինչև ընթացիկ տարվա փետրվարի 1-ից 7-ն ընկած ժամանակահատվածում:

8. Ֆեդերացիայի հայտը մերժվում է, եթե՝

1) Նախարարության կողմից ուսումնասիրությունների արդյունքում պարզվում է, որ ֆեդերացիայի ներկայացրած հայտում կան միտումնավոր անճշտություններ.

2) ֆեդերացիան չի նախատեսել անցկացնել Հայաստանի Հանրապետության մեծահասակների, երիտասարդների և պատանիների առաջնություններ.

3) ֆեդերացիայի կողմից ներկայացված հայտը չի ներկայացվել սույն կարգի 3-րդ կետի պահանջներին համապատասխան.

4) ֆեդերացիայի հայտը ներկայացվել է սույն կարգի 7-րդ կետով սահմանված ժամկետից ուշ:

V. Ֆինանսական աջակցության չափի հաշվարկումը՝ ըստ պայմանական խմբերի

9. Ֆինանսական աջակցության հաշվարկման համար Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի հրամանով ստեղծվում է ֆինանսական աջակցության չափը հաշվարկող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով), որի կազմը և գործունեության կարգը հաստատվում են սույն հրամանի № 2 հավելվածով:

10. Հանձնաժողովը, հիմք ընդունելով բյուջետային տարում միջնաժամկետ ծախսային ծրագրով հաստատված ֆինանսական աջակցության չափը և Նախարարության աշխատակազմի սպորտի բարձրագույն նվաճումների քաղաքականության վարչության զեկույցը, որոշում է աջակցություն ստացող մարզաձևերի և ֆեդերացիաների ցանկը և նրանցից յուրաքանչյուրին հատկացնում մեկնարկային ամրագրված գումար՝ ըստ պայմանական խմբերի.

1) Առաջին խումբ

Մարզաձևի անվանումը	Գումարը (միլիոն)
ծանրամարտ, հունա-հռոմեական ըմբշամարտ, ազատ ոճի ըմբշամարտ, բոնցքամարտ	100 – 130

2) Երկրորդ խումբ

Մարզաձևի անվանումը	Գումարը (միլիոն)
ձյուդո, հրաձգություն, սպորտային մարմնամարզություն, շախմատ	40 – 60

3) Երրորդ խումբ

Մարզաձևի անվանումը	Գումարը (միլիոն)
ատլետիկա, բասկետբոլ, հանդբոլ, թաեքվոնդո	16 – 21

4) Չորրորդ խումբ

Մարզաձևի անվանումը	Գումարը (միլիոն)

սամբո, դահուկային սպորտ, բայդարկաներով և կանոեով թիավարություն, լող, կարատե, հեծանվային սպորտ, նետաձգություն, ջրացատկ, սեղանի թենիս, սուսերամարտ, վոլեյբոլ, խոտի հոկեյ	9 – 15

5) Հինգերորդ խումբ

Մարզաձևերի անվանումը	Գումարը (միլիոն)
գեղասահք, առագաստանավային սպորտ, գեղարվեստական մարմնամարզություն, ակրոբատիկա, ուշու, բադմինթոն, թենիս, ռեգբի, ջրագնդակ, եռամարտ	3 – 8

6) Վեցերորդ խումբ

Մարզաձևերի անվանումը	Գումարը (միլիոն)
սպորտային պարեր, կիոկուշին կարատե, այլ մարզաձևեր	մինչև 2

VI. Ֆինանսական աջակցության չափի հաշվարկումը՝ ըստ գործակցի

11. Պետական ֆինանսական աջակցություն ստացող ֆեդերացիային և մարզաձևին հատկացվում է հաշվարկային հիմք՝ հայտը ներկայացնելու տարվան նախորդող տարվա նվաճած յուրաքանչյուր բարձր արդյունքի համար՝ բազային աշխատավարձի 100-ապատիկի չափով օլիմպիական մարզաձևերի և 50-ապատիկի չափով՝ ոչ օլիմպիական մարզաձևերի համար:

12. Մարզաձևին և ֆեդերացիային բարձր արդյունքների համար հատկացվող գումարը հաշվարկվում է սույն կարգի 11-րդ կետով սահմանված հաշվարկային հիմքի և միջոցառման կարևորության գործակցի արտադրյալին համապատասխան՝ յուրաքանչյուր արդյունքի համար:

1) Օլիմպիական խաղեր

Նվաճած արդյունքը	Գործակիցը
1-ին տեղ	40
2-րդ տեղ	35
3-րդ տեղ	25

2) Աշխարհի առաջնություն

Մեծահասակներ

Նվաճած արդյունքը	Գործակիցը
1-ին տեղ	30

2-րդ տեղ	25
3-րդ տեղ	20

Երիտասարդներ

Նվաճած արդյունքը	Գործակիցը
1-ին տեղ	10
2-րդ տեղ	8
3-րդ տեղ	7

Պատանիներ

Նվաճած արդյունքը	Գործակիցը
1-ին տեղ	6
2-րդ տեղ	4
3-րդ տեղ	3

3) Համաշխարհային ուսանողական խաղեր

Նվաճած արդյունքը	Գործակիցը
1-ին տեղ	10
2-րդ տեղ	8
3-րդ տեղ	7

4) Եվրոպայի առաջնություն

Մեծահասակներ

Նվաճած արդյունքը	Գործակիցը
1-ին տեղ	15
2-րդ տեղ	10
3-րդ տեղ	8

Երիտասարդներ

Նվաճած արդյունքը	Գործակիցը
1-ին տեղ	6
2-րդ տեղ	5
3-րդ տեղ	4

Պատանիներ

Նվաճած արդյունքը	Գործակիցը

1-ին տեղ	3
2-րդ տեղ	2
3-րդ տեղ	1

5) Պատանեկան օլիմպիական խաղեր

Նվաճած արդյունքը	Գործակիցը
1-ին տեղ	15
2-րդ տեղ	10
3-րդ տեղ	8

6) Շախմատի համաշխարհային օլիմպիադա

Նվաճած արդյունքը	Գործակիցը
1-ին տեղ	15
2-րդ տեղ	10
3-րդ տեղ	8

13. Խաղային մարզաձևերի թիմային առաջնություններում նվաճած բարձր արդյունքների դեպքում կիրառվում է սույն կարգի 12-րդ կետով սահմանված գործակցի կրկնակի չափը:

14. Սույն կարգով սահմանված գումարը ֆեդերացիային և մարզաձևին հատկացնելուց հետո առաջացած ազատ գումարը Հանձնաժողովի որոշմամբ կարող է հատկացվել մարզաձևին և ֆեդերացիային՝ որպես լրացուցիչ ֆինանսավորում:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Վ. ԷԼՈՅԱՆ

Հավելված № 2
Հայաստանի Հանրապետության սպորտի և
երիտասարդության հարցերի նախարարի
2017 թվականի հուլիսի 24-ի
№ 146-Ա/1 հրամանի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՀԱՇՎԱՐԿՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

I. Հանձնաժողովի կազմը

1. Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի (այսուհետ՝ Նախարար) հրամանով յուրաքանչյուր տարի մինչև փետրվարի 15-ը ստեղծվում է ֆինանսական աջակցության չափը հաշվարկող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ հետևյալ կազմով.

1) Նախարար՝ նախագահ,

2) Նախարարի տեղակալ,

3) Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) ղեկավար,

4) Աշխատակազմի սպորտի բարձրագույն նվաճումների քաղաքականության վարչության պետ՝ քարտուղար,

5) Աշխատակազմի բյուջետային ֆինանսավորման և ծրագրերի համակարգման վարչության պետ,

6) Աշխատակազմի սպորտի բարձրագույն նվաճումների քաղաքականության վարչության հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության բաժնի պետ,

7) Աշխատակազմի սպորտի բարձրագույն նվաճումների քաղաքականության վարչության մարզական համալիր միջոցառումների ծրագրերի վերլուծության և իրականացման բաժնի պետ,

8) «Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտե» իրավաբանական անձանց միության ներկայացուցիչ (համաձայնությամբ):

II. Հանձնաժողովի գործունեության կարգը

2. Հանձնաժողովի նիստը իրավազոր է, եթե նիստին ներկա են Հանձնաժողովի անդամների առնվազն կեսից ավելին:

3. Հանձնաժողով ներկայացված հայտը ընդունված է համարվում Հանձնաժողովի նիստին ներկա անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

4. Հանձնաժողովը որոշում է ընդունում հաստատել գալիք տարվա համար պետական բյուջեից ֆինանսական աջակցություն ստացող մարզաձևերը և ֆեդերացիաների ցանկը, ինչպես նաև սույն կարգի համաձայն բյուջետային տարվան հաջորդող տարում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված ֆինանսական աջակցության չափը, կամ մերժել՝ համաձայն սույն հրամանի № 1 հավելվածով սահմանված կարգի 4-րդ գլխի 8-րդ կետի:

5. Հանձնաժողովի որոշման քաղվածքը՝ յուրաքանչյուր ֆեդերացիայի մասով, եռօրյա ժամկետում ուղարկվում է ֆեդերացիային:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Վ. ԷԼՈՅԱՆ